Հավելված
ՀՀ կառավարության 2012 թ.
օգոստոսի 9-ի նիստի N 32
արձանագրային որոշման

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՂԹ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՋԵՐՄԱՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ

Նախաբան

«Էկոտոմատո» փակ բաժնետիրական ընկերությունն իր գործունեությունն սկսել է իրականացնել 2011 թվականից: Կոտայքի մարզի Գողթի գյուղական համայնքում ընկերությունը հիմնել է ժամանակակից տեխնոլոգիներով հագեցած 2 հա ջերմատնային տնտեսություն: Ընկերությունը ջերմատնային տնտեսությունը կառուցել է համագործակցելով հոլանդական “Դալսեմ Հորթիկուլտուրալ Պրոջեքտ“ ՎԲ ընկերության հետ, որն իր փորձն է ներդրել նաև ջերմատան շահագործման ընթացքում:

Տնտեսության աշխարհագրական դիրքը և հոլանդական ժամանակակից տեխնոլոգիաները հնարավորություն են տվել արդյունավետ կազմակերպել ջերմատնային գործունեությունը:

Ջերմատնային տնտեսությունում աճեցվում են հոլանդիայից բերված տարբեր սորտերի բարձրորակ (A դասի) վարդեր, որոնց հիմնական մասն արտահանվում է Ռուսաստանի Դաշնություն, Վրաստան, Բելոռուս և Շվեդիա: Վարդերը մատչելի գներով իրացվում են նաև Հայաստանի Հանրապետության շուկաներում: Բարձր որակը և ցածր գները ընկերության արտադրանքը մրցունակ են դարձնում թե ներքին, և թե արտաքին շուկաներում: 2012 թվականին ընկերությունը նախատեսում է արտահանել 800-900 մլն. դրամ ընդհանուր արժողությամբ վարդեր: Ընկերության ջերմատնային տնտեսության շահագործման արդյունքում ստեղծվել է ավելի քան 40 աշխատատեղ:

Ծրագրի նկարագրությունը

Գողթ համայնքում կառուցված վարդերի արտադրության ջերմատան շահագործման ընթացքում ձեռք բերված փորձի, առկա և հնարավոր շուկաների վերլուծության արդյունքում “Էկոտոմատո” ընկերությունը մշակել է ջերմատան տարածքի և արտադրության ընդլայնման ներդրումային ծրագիր: Ծրագիրը նախատեսում է գործող ջերմատան հարակից տարածքում մեկ երկու տարիների ընթացքում կառուցել ևս երեք հա ջերմատուն: Նոր ջերմատան շահագործման և արտադրության ընդլայնման արդյունքում 2.5 անգամ կավելանա վարդերի

արտադրությունը և արտահանումը, ավելի արդյունավետ կօգտագործվեն էներգետիկ և արտադրական մյուս ռեսուրսները, տեղական և արտահանման շուկաներում ավելի մրցունակ կդառնա արտադրանքի գինը: Արտահանման ծավալների ընդլայնումը կնպաստի արտահանման շուկաներում հայկական վարդի և ընդհանրապես հայկական ծաղիկի դիրքի ամրապնդմանը, կայուն մատակարարման ապահովմանը, տրանսպորտային ծախսերի օպտիմիզացմանը և արտադրանքի նկատմամբ վստահության ավելացմանը: Վարդերի մեծ ծավալով արտադրությունը հնարավորություն կտա ավելի մատչելի դարձնել բարձրորակ վարդերի գինը տեղական շուկայում, ինչպես նաև մեղմել դրանց գների սեզոնային տատանումները:

Ծրագրի իրականացման համար կկատարվեն միլիարդավոր դրամի ներդրումներ:

Նոր ջերմատան կառուցման և շահագործման արդյունքում կստեղծվեն լրացուցիչ աշխատատեղեր Կոտայքի մարզի Գողթ և հարակից գյուղական հայմանքների բնակչության համար:

Ակնկալվող արդյունքները

Ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքներն են՝

- նոր աշխատատեղերի ստեղծում, Գողթ և հարակից գյուղական համայնքների բնակչության սոցիալական վիճակի բարելավում.
- բարձրորակ վարդի արտադրության և արտահանման ծավալների ընդլայնում.
- վարդի ծավալների ավելացմանը զուգընթաց դրանց ներմուծվող քանակների էապես կրճատում.
- տեղական շուկայում վարդի գների սեզոնային տատանումների մեղմում: